

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
12 սեպտեմբերի 2005 թ.
Պետական գրանցման թիվ 10205363

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

8 սեպտեմբերի 2005 թ.
ք. Երևան

թիվ ՔՀ-44-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՄՈՒՇՈՂ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան.

Հրամայում եմ

1. Հաստատել «Քրեակատարողական ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վկայականի նմուշը» (հավելվածներ 1 և 1/1) կցվում են:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Դ. Հարությունյան

Հավելված 1

*Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2005 թվականի սեպտեմբերի 8-ի
թիվ ՔՀ-44-Ն հրամանով*

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՄՈՒՇՈՂ

1. Սույն ակտով հաստատվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց (այսուհետ՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձ) վկայականի նմուշը:
2. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձի վկայականը (այսուհետ՝ վկայական) տեխնիկական աշխատանքներ կատարելու նպատակով քրեակատարողական հիմնարկներ,

դրանց վարչական տարածքներ կամ շենքեր և համապատասխան այլ վայրեր մուտք գործելու նրա իրավունքը հավաստող, 6 x 17,5 սմ չափեր ունեցող փաստաթուղթ է (հավելված 1/1), որը, անհրաժեշտությունից ելնելով, կարող է ներկայացվել տեխնիկական սպասարկում իրականացնող անձի կողմից իր լիազորությունները հավաստելու և անձը հաստատելու համար:

3. Առանց համապատասխան ձևակերպման, ջնջումներով և ուղղումներով վկայականը համարվում է անվավեր:

4. Վկայականը երկկողմանի է, որի առջևի մասը լրացված է, իսկ հետին մասը՝ ոչ: Վկայականը լամինացված է: Վկայականը կրելու նպատակով կարող է ունենալ ամրակցման տարբեր հնարավորություններ:

5. Վկայականի առջևի մասի հետին պլանում պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ 5 սմ բարձրությամբ (հավելված 1/1):

6. Վկայականի առջևի մասի վերին միջնամասում հայերեն մեծատառերով երեք տողով տպագրվում են «Հայաստանի Հանրապետություն արդարադատության նախարարություն քրեակատարողական ծառայություն» բառերը, որոնք մնացած մասից անջատվում են հորիզոնական գծով: Հորիզոնական գծից ներքև հայերեն մեծատառերով տպագրվում է «վկայական N ...» բառերը՝ բազմակետի փոխարեն լրացնելով տվյալ վկայականի հերթական համարը:

Վկայականի առջևի մասի ներքևի ձախ եզրային մասում, հորիզոնական գծի եզրին կից փակցվում է տեխնիկական սպասարկում իրականացնող անձի 3,5 x 4,5 սմ չափերի գունավոր, դիմահայաց լուսանկարը:

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձի լուսանկարից աջ տպագրվում է տեխնիկական սպասարկում իրականացնող անձի անունը, հայրանունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնի անվանումը:

Այնուհետ, առանձին տողով տպագրվում են «Ուժի մեջ է մինչև ...» բառերը՝ բազմակետի փոխարեն լրացնելով համապատասխան ամսաթիվը և տարեթիվը: Այդ տողից ներքև հայերեն մեծատառերով տպագրվում է «վարչության պետ»՝ բառերը, որի կողքին դրվում է վարչության պետի ստորագրությունը, կամ համապատասխանաբար՝ վկայականը ստորագրելու իրավասություն ունեցող համապատասխան պաշտոնատար անձի պաշտոնը և ստորագրությունը:

Վկայականի առջևի մասը կնքվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան կնիքով: Կնիքը դրվում է այնպես, որ դրա մի մասը լինի լուսանկարի ստորին մասում, իսկ մյուս մասը՝ վկայականի վրա:

Հավելված 1/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

ՎԿԱՅԱԿԱՆ N ...

ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

ՊԱՇՏՈՆ

Ուժի մեջ է մինչև ...
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ